**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3**
**№ ԲՄԱՊՁԲ-7/12-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 23-ը մարտի 20. թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Պրեմիեր» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Հովսեփյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 20.03.2018թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-7/12-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 5 425 026 (հինգ միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար քսանվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ (Հավելված N 2):

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Պրեմիեր» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | ԼՂՀ ք.Մարտունի Սայաթ-Նովայի փ.31 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1150007186806867 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 90213367 |
| ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ |

**Հավելված N 1**

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| | Գնման առարկան | Չ/մ | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Քանակը | Ընդհանուր գումարը | Ապրանքի մատակարարումը 2020թ ըստ ամիսների |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Հունիս |
| 1 | Ձկան պահածո, տոմատի սոուսով (Ձկան պահածո) | կգ | 674 | 8 049 | 5 425 026 | 8 049 |
| Ընդհանուր գումարը՝ 5 425 026 (հինգ միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար քսանվեց) ՀՀ դրամ | | | | | | |

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:

**Հավելված N 2**

**Վճարման ժամանակացույց**

| Հ/h | Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը | ***Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ** | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | CPV-ի կոդը | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Ձկան պահածո, տոմատի սոուսով (Ձկան պահածո) | 15211110/2 | 5 425 026 | 5 425 026 | 5 425 026 | 5 425 026 | 5 425 026 | 5 425 026 | 5 425 026 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՑՈՒԼՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Պրեմիեր» ՍՊԸ տնօրեն

Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ